ԴՈՒ ՊԵՏՔ ԵՍ ՏԻՐՈՋԸ

Մարկոս 11:1-11

*«1 Երբ մոտեցան Երուսաղեմին, Բեթփագեին և
Բեթանիային, Ձիթենյաց լեռան մոտ, Հիսուս ուղարկեց
աշակերտներից երկուսին: 2 Եվ նրանց ասաց. «Դուք
գնացե՛ք այդ գյուղը, որ ձեր դիմացն է. և հենց որ այնտեղ
մտնեք, կգտնեք մի կապված ավանակ, որի վրա ոչ մի
մարդ արարած չի նստել. արձակեցե՛ք այն և բերե՛ք: 3 Եվ
եթե մեկը ձեզ ասի. «Այդ ավանակը ինչո՞ւ եք արձակում»,
կ՚ասեք. «Տիրոջը պետք է». և նա իսկույն դրան այստեղ
կ՚ուղարկի»: 4 Գնացին և գտան ավանակը՝ կապված դրան
մոտ, դրսում, փողոցի մեջ, և այն արձակեցին: 5 Եվ այնտեղ
կանգնածներից ոմանք ասացին նրանց. «Ի՞նչ եք անում,
ինչո՞ւ եք այդ ավանակն արձակում»: 6 Եվ նրանք նրանց
ասացին, ինչպես Հիսուս ասել էր. ու նրանց թույլ տվին:
7 Ավանակը բերեցին Հիսուսի մոտ. և դրա վրա զգեստներ
գցեցին, և Հիսուս նստեց դրա վրա: 8 Եվ շատեր իրենց
զգեստները փռում էին ճանապարհին. և ուրիշներ
ծառերից ճյուղեր էին կտրում ու գցում ճանապարհի վրա:
9 Եվ նրանք, որ առաջից ու հետևից էին գնում, աղաղակում
էին և ասում. «Ողսաննա՜ Բարձրյալին, օրհնյա՛լ լինի նա,
որ գալիս է Տիրոջ անունով. 10 Օրհնյա՛լ լինի մեր հոր՝
Դավթի թագավորությունը, որ գալիս է: Խաղաղությո՛ւն՝
երկնքում և փա՛ռք՝ բարձունքներում»: 11 Եվ Հիսուս մտավ
Երուսաղեմ, գնաց տաճար ու նայեց իր շուրջը, ամեն ինչի
վրա. և որովհետև երեկոի ժամ էր, բարձրացավ Բեթանիա՝
տասներկուսի հետ միասին:»*

Զաքարիա 9:9

*«Մեծապես ուրախացիր, ով Սիոնի աղջիկ, ցնծությամբ
աղաղակիր, ով Երուսաղեմի աղջիկ, ահա քո Թագավորը
գալիս է քեզ մոտ. նա արդար ու փրկագործ է, հեզ, և էշի
վրա հեծած, այսինքն էշի ձագի՝ ավանակի վրա:»*

Քարոզի Նշումներ

Հաջորդ Քարոզի Թեման

ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հովիվ Սարօ Խաչիկեան